

*Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг.* Составитель сборника и переводчик Г. Махмурян. Ред. В. Казахцяян. Ереван, Институт истории НАН РА, 2011, 560 с.

Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում: *Ժողովածուի կազմող և թարգմանիչ՝ Գ. Մախմուրյան: Խմբ.՝ Վ. Ղազախեցյան: Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 560 էջ:*

Վերջին երկու տասնամյակներում Հայաստանի պատմաբանների ուշադրության կենտրոնում է 1917–1920 թթ. իրադարձությունների լուսաբանումը՝ 1918 թվականի նոբաստեղծ Հայաստանի Հանրապետության գործընթացների առանձնահատկություններն ու օրինաչափությունները հասկանալու համար: Ընդ որում, երկու էական հարցադրումներ դեռևս կարոտ են խորը վերլուծության: Առաջինը հայկական անկախության հիմնահարցն է՝ որպես 1917 թ. ռուսական հեղափոխությունների արդյունք, այն որպես հարկադրված, պահի անհրաժեշտությամբ թելադրված գործընթաց, և երկրորդը՝ հայկական պետության արտաքին քաղաքական կյանքի հիմնահարցերը: Մի կողմից Ռուսական կայսրության փլուզումը թելադրում և ստիպում էր ինքնուրույն գործել, սակայն մյուս կողմից Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ վարվող կործանարար քաղաքականությունը սպառնում էր ոչ միայն նորաստեղծ պետությանը, այլև հենց հայ ժողովրդի գոյությանը:

Ինչ վերաբերում է Անտանտի տերություններին, ապա դրանք, գործելով «հնարավորինս քիչ ու հնարավորինս ուշ» սկզբունքին համաձայն, սահմանափակվում էին պարենային օգնությամբ, մանդատի երկար ու ձիգ խոստումներով, քաղաքական ճանաչումով ու բավական ուշացած ռազմական մատակարարումներով: Այդ ամենը բավարար չէր պահպանելու հայկական անկախությունը և պաշտպանելու այն բնակչությանը, որը դեռ չէր թողափել Առաջին համաշխարհային պատերազմի ավերիչ ազդեցությունն ու կորուստները:

ՀՀ արտաքին քաղաքական ոլորտը

ծայրաստիճան խճճված էր առաջին իսկ պահից, իսկ այդ ոլորտի քաղաքականության հիմնահարցերը, որոնք սկիզբ էին առնում 1914 թվականից, լուրջ խնդիր էին անգամ խոշոր տերության համար: Այդ խնդիրների հանգուցալուծման համար պահանջվում էր ինչպես հսկայական նյութական միջոցներ, այնպես էլ քրտնաջան աշխատանք և արհեստավարժ հմտություն: Մինչդեռ մեր նորաստեղծ հանրապետությունը կրում էր 1915 թ. կործանարար բեռը՝ ավերով ու գաղթականներով. անհրաժեշտություն կար թուրքական արշավանքից պաշտպանելու Արևելյան Հայաստանը: Խնդիր էր նաև կառավարչական մարմինների և փորձառու պաշտոնյաների բացակայությունը:

Վերոհիշյալ բարդագույն խնդիրները բավական մանրամասն ներկայացված են ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի փաստաթղթերում: Վավերագրերն ընտրել ու անգլերենից ռուսերեն է թարգմանել գրախոսվող ժողովածուի կազմող, պատմական գիտությունների դոկտոր Գայանե Մախմուրյանը: Հրատարակված 330 փաստաթղթերը հիմնականում ժապավենային պատճենների տեսքով 1980-ական թվականներին ստացվել են ԱՄՆ-ի ազգային արխիվից (Վաշինգտոն) և պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում: Հարկ է նշել, որ ամերիկյան հավաքածուի առայժմ չհրատարակված ու գիտական շրջանառության մեջ չներառված բազմաթիվ այլ գեկուցագրեր սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Ժողովածուի կազմողը կատարել է բազմակողմանի և հաջողված աշխատանք՝ հրապարակման առանցքը դարձնելով երեք հիմնական թեմա: Դրանք են՝

հսկայածավալ աշխատանք է կատարել՝

Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավիճակը ու նրա հնարավորությունները, Հայկական հարցը Փարիզի հաշտության վեհաժողովում, ինչպես նաև Ջ. Հարբորդի առաքելության այն զեկուցագրերը, որոնք կազմվել են Ադանայից, Մարդինից ու Խարբերդից, Սեբաստիայից, Էրզրումից, Կարսից Երևան և այնուհետև անդրկովկասյան մյուս մայրաքաղաքներ այցելության ողջ ճանապարհին՝ մինչև Բաթումից նավով հեռանալու պահը:

Առաջին թեման ներկայացված է 1917–1918 թթ. Կովկասյան ճակատում տիրող իրավիճակի մասին զեկուցագրերով՝ ընդհուպ մինչ Բրեստի հաշտության կնքումը ու հետագայում դրա չեղյալ հայտարարումը: Այնուհետև ընթերցողին ներկայացվում են տարբեր նամակներ, հուշագրեր և ԱՄՆ-ի ապագա նախագահ, իսկ տվյալ պահին Ամերիկյան պարենային վարչության տնօրեն Հ. Հուվերի հայտագիրը՝ Հայաստանում տիրող իրադրության և օգնության կազմակերպման վերաբերյալ: Այդ ուշագրավ փաստաթղթերն ընտրվել են վերոհիշյալ հավաքածուից և դրանցից յուրաքանչյուրը կարող է առանձին հրատարակման առարկա լինել: Ընդ որում, վավերագրերից միայն մեկը՝ Ամերիկյան նպաստամատուց վարչության և Պոդոս Նուբարի ու Ա. Ահարոնյանի միջև կնքված համաձայնագիրն արդեն հրատարակել էր Ս. Վրացյանը (Հայաստանի Հանրապետություն: Երևան, 1993, էջ 637–638), իսկ երեք վավերագրեր՝ նախագահ Վ. Վիլսոնին հղված 1919 թ. հուլիսի 5-ի նամակը, նույն թվականի հուլիսի 16-ի «Բրադրությունը Ռուսահայաստանում» հուշագիրը և 1920 թ. հուլիսի 26-ին պետական քարտուղար Բ. Կոլբիին ուղարկված հայտագիրն ներառված են Փարիզի վեհաժողովին նվիրված ամերիկյան արխիվային նյութերի՝ 12 հատորից բաղկացած պետական հրատարակությունում (*Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference. In 12 vols. Wash., US GPO, 1942–1947*) և կարևոր նշանակություն ունեն:

Նշենք, որ ժողովածուի կազմողը

ուսումնասիրելով Փարիզի վեհաժողովի պաշտոնական արձանագրությունների 12 հատորները, միաժամանակ դրանցից ընտրելով այն բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են Հայաստանին ու Հայկական հարցին առնչվող բանակցություններին:

Ժողովածուն հնարավորություն է ընձեռում հետևելու դիվանագիտական մեծ խաղի բազում նրբերանգներին և հասկանալու հատկապես ինչի հետ էին կապում հայկական խնդիրները միջազգային խոշոր բանակցությունների ժամանակ, ինչպես էին իրականացնում իրենց քաղաքականությունը Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի առաջին դեմքերը, ինչով էր զբաղվում Գերագույն տնտեսական խորհուրդը, ինչ էին քննարկում ամերիկյան պատվիրակության ամենօրյա նիստերում, ինչ լույսի ներքո էր դիտարկվում Ռուսաստանը, և հատկապես ինչ նպատակով էր երկարաձգվում այդտեղ ծավալված քաղաքացիական պատերազմի ավարտը:

Բանակցությունների ընթացքի մասին պատմող փաստաթղթերն էլ ավելի ուշագրավ են, քանի որ մանրամասն ներկայացնում են ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի ու Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լոյդ Ջորջի գործունեությունը: Դրանք գաղափար են տալիս ինչպես սեփական ազգային շահերն ապահովող քաղաքական մեծագույն դեմքերի սուր վեճերի, այնպես էլ նրանց համագործակցության մասին: Վերջինս թեև հիմնականում պարտադրված բնույթ ուներ, սակայն, այդուամենայնիվ, անխուսափելի էր: Բանակցությունների ընթացքը ներկայացված է կենդանի և մատչելի լեզվով, որը վկայում է առաջադրված խնդիրների նկատմամբ թարգմանչի բարեխիղճ վերաբերմունքի մասին:

Հրատարակված փաստաթղթերից հատկապես առանձնացնենք Թուրքիայում մանդատների ուսումնասիրման միջազգային հանձնաժողովի ամերիկյան բաժանմունքի՝ այն է Հ. Քինգ-Չ. Քրեյնի հանձնաժողովի հաշվետվությունը (էջ 200–223): Փաստաթուղթը ստեղծվել է 1919 թ. օգոստոսի 28-ին և արժեքավոր վկայություններ է ներառում 1915 թ.

հայոց ցեղասպանության, Գիլիկիայի հայության ակնկալիքների, հայկական առանձին պետության ստեղծման ու մանրատատար խոշոր տերության ուժերով նրան պաշտպանելու անհրաժեշտության մասին: Հաշվետվության հեղինակները ներկայացնում են նման պետության հնարավոր չափերն ու ազգային կազմը՝ ելակետ ընդունելով 1914 թ. տվյալները: Իր հերթին, հատորի կազմող Գ. Մախմուրյանը, օգտագործելով Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը, այդ թվում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալները, Գրիգոր Ջոհրայի 1913 թ. հրապարակված աշխատությունն ու Փարիզում հայկական պատվիրակության 1919–1920 թթ. հայտագրերը, փաստերով հիմնավորված ճշգրտումներ է կատարում ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ նրա հատվածներ կազմող Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի նահանգներում, Գիլիկիայում ու Հայաստանի Հանրապետությունում՝ նույն ժամանակահատվածում հայերի քանակական կազմին վերաբերող (էջ 224–225): Որպես համալրում՝ ժողովածուում ընդգրկված է նաև ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին Հայկական միասնական պատվիրակության ղեկավարներ Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի 1920 թ. հուլիսի 14-ին հասցեագրած հուշագիրը առդիմներով, այդ թվում՝ «Հայաստանի բնակչություն» տեղեկանքը (էջ 406–414):

Փարիզի վեհաժողովի թեման, բնականաբար, ընդգրկել է նաև օգնության գծով դաշնակիցների Գերագույն կոմիսար ամերիկացի գնդապետ Վ. Հասկելի նշանակման ու գործունեության հարցերը (էջ 148–149, 154–155, 193–194), ինչպես և Հայկական լեռնաշխարհում տիրող իրարությունն ու հայերի իրավիճակի հետ ծանոթանալու համար ստեղծված ռազմական առաքելության պատմությունը: Վերջինս գլխավորել էր Եվրոպայում ԱՄՆ-ի էքսպեդիցիոն զորքերի գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Ջ. Հարբորդը (էջ 178–179, 187, 199): Գերագույն հանձնակատարի գործունեությունը ներկայացված է վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին նրա՝ 1919 թ. օգոստոսի 5-ին, 27-ին ու

դեկտեմբերի 1-ին ուղարկած հեռագրերով (էջ 184, 200, 352–353), պետքարտուղար

Ռ. Լանսինգին 1920 թ. հունվարի 22-ին առաքված գրությամբ (էջ 383–384), ինչպես նաև 1919 թ. օգոստոսի 21-ին Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին հղված դիմումով (էջ 193–194): Գեներալ Ջ. Հարբորդի առաքելությունը բազմիցս լուսաբանել է հայկական պատմագիտությունը: ԱՄՆ-ի պետքարտուղարի համար 1919 թ. հոկտեմբերի 16-ին նրա կազմած զեկուցագրից (ժողովածուի էջ 304–336) ընդարձակ քաղվածքը հրատարակվել է Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունները 1918–1920 թթ.» մենագրության մեջ (Երևան, 2007, էջ 248–253): Ընդ որում, նախկին թարգմանությունը ևս պատկանում է Գ. Մախմուրյանի գրչին ու պակաս հաջողված է, քան ներկա տարբերակը: Բացի այդ՝ նոր հրատարակությունում մենք ունենք գրեթե ամբողջ զեկուցագրի թարգմանությունը, միաժամանակ ներկայացված են նաև առաքելության անդամների գրչին պատկանող մի շարք օրագրեր և զեկուցագրեր: Չէ՞ որ ողջ ուղևորության ընթացքում ամերիկացիները հանդիպում էին հայերի, համերկրացի քարոզիչների, հույների ու թուրքերի հետ՝ ստանալով բազմաթիվ խնդրագրեր տեղացիներից և կազմելով սեփական տեղեկանքներ:

Գիտական շրջանառության մեջ առաջին անգամ դրված փաստաթղթերի ցանկում նշենք Կովկասում ամերիկյան ռազմական առաքելության պետ Բ. Մուրի ՀՀ «Քաղաքական կուսակցություններ» գրությունը (էջ 230–231), մինչպատերազմյան Մարզվանի, քաղաքի հայերի կոտորածն ու հետպատերազմական վիճակը ներկայացնող Անատոլիա քոլեջի նախագահ Ջ. Ուայթի զեկուցագիրը (էջ 237–231), ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Ադբայանի «Երևանում համալսարանի հիմնադրելու մասին» տեղեկանքը (էջ 242) ու վերջինիս «Հայաստանում միջնակարգ, ոչ լրիվ միջնակարգ ու տարրական կրթության դպրոցների մասին» զեկուցագիրը (էջ 244–245): Ամերիկյան վավերագրերի թվում նշենք Հայաստանի դժվարություններին նվիրված՝ Ջ. Հարբորդի 1919 թ. հոկտեմբերի 14-ի թվակիր հեռա-

գիրքը (էջ 302–303):

Չափազանց խոսուն են Կոդրի մոտ ամերիկյան առաքելության վրա կատարված հարձակման նկարագրությունը (էջ 256–257, 271–274), փոխզնդապետ Ջ. Պ. Ջեքսոնի հոկտեմբերի 7-ի հուշագիրը (էջ 263–264), նույն թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 8-ի ընթացքում արշավախմբի՝ ցամաքով ընթացած խմբի օրագիրը (էջ 268–279): Վերջին փաստաթուղթը, բուռն իրադարձությունների ճշգրտորեն վերարտադրման շնորհիվ, ընկալվում է որպես գեղարվեստական ստեղծագործություն: Ոչ պակաս բովանդակալից է այն պաշտոնական անձանց ցուցակը, որոնց հետ առաքելության անդամները հանդիպել էին Ադանայից մինչև Թիֆլիս իրենց երկարուձիգ ճանապարհին (էջ 284–287): Այդ ցուցակը կազմելիս Գ. Մախմուդյանը կատարել է աղբյուրագիտական լրացուցիչ աշխատանք, քանի որ հիշատակված անուններից շատերը փաստաթղթերում աղավաղված են ու պահանջում էին նույնականացում:

Հայաստանի Հանրապետության 1919 թ. ամռան սոցիալական ծանրագույն վիճակը արտացոլված է ԱՄՆ-ի փոխհյուպատոս Հ. Դուլիթլի և Ամերիկյան նպաստամատույց վարչության առաքելության պետ մայոր Ջ. Գրինի Թիֆլիսից հղված զեկուցագրերում (էջ 166–171, 189–190), ինչպես և Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ Ջ. Ջերարդի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարին հասցեագրած նամակում (էջ 189–190): Հայ ժողովրդի գոյությանն իսկ սպառնացող վտանգի իրական լինելու, շտապ, նաև ռազմական ուժերով աջակցություն անհրաժեշտության մասին նրանց գնահատականներին համամիտ էր ինչպես Թուրքիայում ԱՄՆ-ի ռազմական դիտորդը, այնպես էլ Թիֆլիսում տեղակայված Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի գլխավոր տնօրենը:

Ամփոփելով հարկ է նշել Գ. Մախմուդյանի կողմից կազմած գիտատեղեկատվական հարուստ նյութերի և առանձին վավերագրերի մեկնաբանությունների մասին: Առաջինը ներառում է անվանական ու տարողունակ պարզաբանումներ փաս-

տաթղթերում հիշատակված բոլոր անձանց, հատկապես XX դարասկզբին գործած հայ գործարարների և ամերիկյան քարոզիչների մասին, իսկ սա ենթադրում է աղբյուրագիտական լրացուցիչ զգալի որոնումներ: Մեկնաբանություններն էլ (օրինակ՝ էջ 24–25, 79, 224–225, 336, 354–358, 389–390) բովանդակում են ոչ միայն անհրաժեշտ մատենագիտական տվյալներ, այլև շատ տեղին պարզաբանումներ: Մա վերաբերում է 1920 թ. հունվարի 21 – փետրվարի 11-ը Մարաշում իրականացված հայերի կոտորածին, Ղարաբաղում ու Նախիջևանում տեղի ունեցած դեպքերին, նաև Հայաստանում ու Անդրկովկասում կենսագործվող բրիտանական քաղաքականությանը: Ընդ որում, Գ. Մախմուդյանը մեջբերում է ոչ միայն արխիվային լրացուցիչ նյութը, այլև օգտագործում է Հայաստանի ազգային արխիվի հրատարակությունները՝ «Նախիջևան-Շարուրը 1918–1921 թթ.», Փաստաթղթեր և նյութեր («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1993, -1–2), «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (Երևան, 2003):

Առաջին անգամ կազմված նման ժողովածուն, անկասկած, կարող է օգտակար լինել ոչ միայն մեր հանրապետության պատմաբաններին, ուսանողներին ու լայն ընթերցողին, այլև նույն հարցերով զբաղվող օտար հետազոտողներին:

Կարծում ենք, որ վերոհիշյալ նյութին տիրապետելն անհրաժեշտ է մեր դիվանագետներին, որոնք արտերկրում ներկայացնում են հայոց ազգային շահերը: Այդ տեսակետից արդարացված է ինչպես վավերագրերի ռուսերեն թարգմանությունը, այնպես էլ հետազայում հատորի անգլերեն հրատարակումը, որը նշանակալի կընդլայնի ընթերցողների լսարանը:

Ժողովածուն զերծ չէ թերություններից: Մերթընդմերթ նկատելի են անհաջող դարձվածքներ և ոճական անհարթություններ, սակայն, ամբողջությամբ վերցրած, թարգմանության որակը, թեմայի հայագիտական նորարարությունն ու կարևորությունն արժանի են հրապարակավ գովաբանության: Գիրքը ներառում է վավերագրերի ու շագրավ և բովանդակա-

լից հավաքածու, այն խորհելու լիառատ

աղբյուր է տալիս, իսկ տեքստի լեզուն մատչելի է, ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Լայն ընթերցողների և մասնագետների դատին ներկայացված ժողովածուն, ի-

հարկե, չի սպառում ողջ հիմնախնդիրը. արխիվում պահվող բազմաթիվ նյութերը լայն հեռանկար են ընձեռում կազմողին հետագա հետազոտությունների համար: Հատկապես ցանկալի է առավել մանրամասն լուսաբանել 1920 թ. իրադարձություններն ու հիմնախնդիրները:

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ